Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29 հունվարի 2025թ. ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ Գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանս ծանոթանալով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-64/23» ծածկագրով հրապարակված գնման ընթացակարգին

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար կտորի, լաթի և սայլակի ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-64/23» ծածկագրով գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնում ներկայացված սայլակի մատակարարման համար ընտրված մասնակից է ճանաչվել «ՄԵԳԱԼՈԳ» ՍՊԸ-ն և 2024թ. փետրվարի 26-ին «ՀԱԷԿ» ՓԲԸ և «ՄԵԳԱԼՈԳ» ՍՊԸ-ի միջև կնքվել է № ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-64/23-01/075 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրով սահմանված է.

- Գնորդն իրավունք ունի՝

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

- 2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի անբաժան մաս կազմող Հավելված 1-ով (տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց) մատակարարման ժամկետը սահմանված է «պայմանագիրը կնքելուց հետո 60 օրացուցային օրվա ընթացքում»:

Հիմք ընդունելով, որ «ՄԵԳԱԼՈԳ» ՍՊԸ կողմից չի մատակարարվել պայմանագրով սահմանված ապրանքը, որի հետևանքով էականորեն խախտվել է պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 1-ով սահմանված մատակարարման ժամկետները և առաջնորդվելով Պայմանագրի դրույթներով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից Պայմանագիրը լուծվել է միակողմանի:

Ղեկավարվելով Պայմանագրի դրույթներով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 2-րդ մասով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ՄԵԳԱԼՈԳ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում լիազորված մարմնին և մասնակցին տրամադրելու օրվանից:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«ՄԵԳԱԼՈԳ» ՍՊԸ	02861295	ՀՀ, ք. Երևան, Եզ. Կողբացի, փ. 3շ., բն. 44		Առկա է		Որոշում առ 2025 թվականի հունվարի 29-ի Գնման ընթացակարգի ծածկագիրն է՝ « ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-64/23»